# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

## 25.05.2018թ. կնքված N ՀՀ ԱԺ ԳՀԱՊՁԲ-18/37 ծածկագրով պետական գնման պայմանագրի

**ք.Երևան** «07» 06 .2018թ.

ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմը, ի դեմս աշխատակազմի ղեկավարի առաջին տեղակալ Գ. Մխեյանի, որը գործում է աշխատակազմի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Գնորդ)՝ մի կողմից, և «Ֆլեշ Մոտորս» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Լալայանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Վաճառող), մյուս կողմից, երկուսը միասին /այսուհետ՝ Կողմեր/, հիմք ընդունելով 25.05.2018թ. կնքված N ՀՀ ԱԺ ԳՀԱՊՁԲ-18/37 ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.5 և 8.6 կետերը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիր N 1-ը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին:

### 1. Համաձայնագրի առարկան

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /այսուհետ՝ Կարգ/ 56-րդ կետի 4-րդ ենթակետը՝ Կողմերը որոշեցին Պայմանագրի.

1.1 Հավելված 1-ի «Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի» մատակարարման ժամկետը սյունակում «մինչև հունիսի 10-ը» բառերը փոխարինել «մինչև հունիսի 26-ը» բառերով, համաձայն Համաձայնագրին կից ներկայացված N 1 հավելվածի,

1.2 Հավելված 2-ի «Վճարման ժամանակացույցի» ապրանքի վճարման «մայիս» բառը փոխարինել «հունիս» բառով, համաձայն Համաձայնագրին կից ներկայացված N 2 հավելվածի:

1.3 Կարգի 21-րդ կետի 1-ին ենթակետի ը) պարբերությամբ՝ Մասնակիցը համաձայն է ապրանքը մատակարարել ավելի կարճ ժամկետում:

### 2. Այլ պայմաններ

2.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է 25.05.2018թ. կնքված N ՀՀ ԱԺ ԳՀԱՊՁԲ-18/37 ծածկագրով պետական գնման պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն Համաձայնագրում Կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Սույն Համաձայնագիրը կազմված է 5 էջից, հայերեն լեզվով՝ կնքված երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Համաձայնագրի N 1, N 2 հավելվածները, համարվում են Համաձայնագրի անբաժանելի մասը:

3. **Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
| --- | --- |
| ՀՀ ԱԺ աշխատակազմ | «Ֆլեշ Մոտորս» ՍՊԸ |
| ք. Երևան, Բաղրամյան պող.19 | ք. Երևան, Ռուբինյանց փ. 31 |
| ՀՎՀՀ 00008519 | ՀՎՀՀ 00873228 |
| ՀՀ ՖՆ գործառնական վարչություն | «Արարատբանկ» ԲԲԸ |
| Հ/Հ 900011020089 | Հ/Հ 1510012745550100 |
| ՀՀ ԱԺ աշխատակազմի ղեկավարի առաջին տեղակալ | Տնօրեն՝ |
| Գ. Մխեյան | Ա. Լալայան |
| ------------------------------- (ստորագրություն) | ------------------------------- (ստորագրություն) |
| Կ.Տ | Կ.Տ |

*Հավելված N 1*
*25 մայիսի 2018 թ. կնքված*
*ՀՀ ԱԺ ԳՀԱՊՁԲ-18/37 ծածկագրով պայմանագրի*
*« 07 » « 06 » 2018 թ. կնքված N1 համաձայնագրի*

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը և ապրանքային նշանը | արտադրողը և ծագման երկիրը | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | միավոր գինը/ ՀՀ դրամ | ընդհանուր գինը/ ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | մատակարարման | | |
| | | | | | | | | | հասցեն | ենթակա քանակը | ժամկետը* |
| 1 | 31442220/4 | Կուտակիչ մարտկոց Monbat | Monbat Group Բուլղարիա | Կապարաթթվային մեկնարկային կուտակիչային մարտկոց TOYOTA CAMRY և NISSAN SENTRA ավտոմեքենաների համար, լարումը 12վ, անվանական ունակությունը 70ա/ժ, չափերը՝ 175 x 161 x 220 մմ, մեկնարկային հոսանքը EN 750, զանգվածը 18,5 կգ, տեսակը D26R: Ապրանքը պետք է լինի չօգտագործված: Առնվազն 1 տարվա երաշխիքային ժամկետ | հատ | 38000 | 646000 | 17 | ՀՀ Աժ ք. Երևան, Մ. Բաղրամյան պող. 19 | 17 | II-րդ եռամսյակ մինչև հունիսի 26-ը |
| 2 | 31442220/1 | Կուտակիչ մարտկոց Tenax | Johnson Controls Գերմանիա | Կապարաթթվային մեկնարկային կուտակիչային մարտկոց, NISSAN ALTIMA ավտոմեքենայի համար լարումը 12վ, անվանական ունակությունը 60ա/ժ, չափերը՝ 173 x 232 x 225 մմ, մեկնարկային հոսանքը EN 600, զանգվածը 17 կգ, տեսակը D23R: Ապրանքը պետք է լինի չօգտագործված: Առնվազն 1 տարվա երաշխիքային ժամկետ | հատ | 30000 | 60000 | 2 | ՀՀ Աժ ք. Երևան, Մ. Բաղրամյան պող. 19 | 2 | II-րդ եռամսյակ մինչև հունիսի 26-ը |
| 3 | 31442220/3 | Կուտակիչ մարտկոց Monbat | Monbat Group Բուլղարիա | Կապարաթթվային մեկնարկային կուտակիչային մարտկոց, NISSAN X-TRAIL ավտոմեքենայի համար, լարումը 12վ, անվանական ունակությունը 74ա/ժ, չափերը՝ 175 x 278 x 175 մմ, մեկնարկային հոսանքը EN 750, զանգվածը 17,5 կգ, տեսակը T6/LBN3: Ապրանքը պետք է լինի չօգտագործված: Առնվազն 1 տարվա երաշխիքային ժամկետ | հատ | 37000 | 148000 | 4 | ՀՀ Աժ ք. Երևան, Մ. Բաղրամյան պող. 19 | 4 | II-րդ եռամսյակ մինչև հունիսի 26-ը |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 4 | 31442220/2 | Կուտակիչ մարտկոց Monbat | Monbat Group Բուլղարիա | Կապարաթթվային մեկնարկային կուտակիչային մարտկոց TOYOTA HIACE ավտոմեքենայի համար, արումը 12վ, անվանական ունակությունը 95ա/ժ, չափերը՝ 173 x 230 x 225 մմ, մեկնարկային հոսանքը EN 850, զանգվածը 21 կգ, տեսակը D31R: Ապրանքը պետք է լինի չօգտագործված: Առնվազն 1 տարվա երաշխիքային ժամկետ | հատ | 44000 | 88000 | 2 | | 2 | II-րդ եռամսյակ մինչև հունիսի 26-ը |

*Ապրանքի մատակարարման ժամկետը, իսկ փուլային մատակարարման դեպքում՝ առաջին փուլի մատակարարման ժամկետը, պետք է սահմանվի առնվազն 20 օրացուցային օր, որի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրը, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է ապրանքը մատակարարել ավելի կարճ ժամկետում: Մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա հունիսի 26-ը: Ապրանքը մատակարարելիս պետք է ունենա որակի սերտիֆիկատ եթե կիրառելի է:

**ԳՆՈՐԴ**

ՀՀ ԱԺ աշխատակազմ
ք. Երևան, Բաղրամյան պող.19
ՀՎՀՀ 00008519
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011020089
ՀՀ ԱԺ աշխատակազմի ղեկավարի
առաջին տեղակալ
Գ. Մխեյան

/ստորագրություն/
Կ.Տ

**ՎԱՃԱՌՈՂ**

«Ֆլեշ Մոտորս» ՍՊԸ
ք. Երևան, Ռուբինյանց փ. 31
ՀՎՀՀ 00873228
«Արարատբանկ» ԲԲԸ
Հ/Հ 1510012745550100
Տնօրեն՝
Ա. Լալայան

/ստորագրություն/
Կ.Տ

*Հավելված N 2*
*25 մայիսի 2018 թ. կնքված*
*ՀՀ ԱԺ ԳՀԱՊՁԲ-18/37 ծածկագրով պայմանագրի*
*« 07 » « 06 » 2018 թ. կնքված N1 համաձայնագիր*

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| | | | Ապրանքի | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում* /4264/ | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 31442220/4 | Կուտակիչ մարտկոց | - | - | - | - | - | 323000 | 484500 | 484500 | 484500 | 646000 | 646000 | 646000 | **646000** |
| 2 | 31442220/1 | Կուտակիչ մարտկոց | - | - | - | - | - | 30000 | 45000 | 45000 | 45000 | 60000 | 60000 | 60000 | **60000** |
| 3 | 31442220/3 | Կուտակիչ մարտկոց | - | - | - | - | - | 74000 | 111000 | 111000 | 111000 | 148000 | 148000 | 148000 | **148000** |
| 4 | 31442220/2 | Կուտակիչ մարտկոց | - | - | - | - | - | 44000 | 66000 | 66000 | 66000 | 88000 | 88000 | 88000 | **88000** |

* *Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

**ԳՆՈՐԴ**

ՀՀ ԱԺ աշխատակազմ
ք. Երևան, Բաղրամյան պող.19
ՀՎՀՀ 00008519
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011020089
ՀՀ ԱԺ աշխատակազմի
ղեկավարի առաջին տեղակալ
Գ. Մխեյան

/ստորագրություն/
Կ.Տ

**ՎԱՃԱՌՈՂ**

«Ֆլեշ Մոտորս» ՍՊԸ
ք. Երևան, Ռուբինյանց փ. 31
ՀՎՀՀ 00873228
«Արարատբանկ» ԲԲԸ
Հ/Հ 1510012745550100
Տնօրեն՝
Ա. Լալայան

/ստորագրություն/
Կ.Տ